

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

Ջ. Մ. Սիրզարեկյան

Մ. ԹԱԴԻԱԴՅԱՆԻ ԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Գրող, գիտնական, հրապարակախոս և մանկավարժ Մեսրոպ Թադիադյանը 19-րդ դարի հայ վերածնության շրջանի ամենապայծառ ղեմերից մեկն է։ Հայ նոր գրականության մեջ Մ. Թադիադյանն իր ստեղծագործության լիրիկական և երգիծական մոտիվներով աշխարհիկ բովանդակություն մտցրեց թե՛ հայ պոեզիայի և թե՛ արձակի մեջ։ Ըր արտահայտած առաջավոր գաղափարներով նա՝ Վեր բարձրացավ ժամանակի խավար մտայնությունից և արտահայտեց այնպիսի ճշմարիտ մտքեր, որոնք հետագայում իրականություն դարձան։

Մ. Թադիադյանի ողջ կյանքը և գործունեությունը հայրենասիրության, հայ ժողովրդին անշահախնդիր ծառայելու մի փայլուն օրինակ է։

Մ. Թադիադյանը թողել է գրական և հրապարակախոսական հարուստ ժառանգություն։ Բայց նրա փաստակի միայն մի մասն է հասել մեզ, իսկ մեծ մասը կամ անհայտացել է և կամ ղեռն է չի հրապարակված ու մնում է առանձին արխիվներում փակված։

Հուսավորելի-ղեմոկրատ Մ. Թադիադյանի ստեղծագործությունն արժանացել է մեր պատմա-բանասիրության ուշադրությանը։ Նրա ստեղծագործությունն ուսումնասիրվել է նախասովետական և սովետական շրջանի հայ բանասերների կողմից։ Անցյալ դարի 80-ական թվականներին Մ. Թադիադյանի բնագործակ կենսագրությունը հրապարակեց Հովհ. Մկրչյանը։ Հայ գրականությանը նվիրված իրենց ուսումնասիրություններում Մ. Թադիադյանի ստեղծագործությունն անդրադարձել են Վ. Փափադյանը, Լ. Մանվելյանը, Հ. Աճառյանը։ Մ. Թադիադյանի կյանքի և ստեղծագործության մասին ծավալուն մեկնադրություն է հրատարակել Ղեռն։

Սովետական շրջանում Մ. Թադիադյանի ստեղծագործությունն ավելի շատ ուշադրություն դրավեց։ Բացի առանձին հոդվածներից, գրվեցին նաև լուրջ ուսումնասիրություններ, մենագրություններ նրա կյանքի և ստեղծագործության մասին։ Մ. Թադիադյանի գրական գործունեությունն ուսումնասիրելու մի լուրջ փորձ է Ռ. Նանումյանի «Մ. Թադիադյան» (1947) աշխատությունը։ Ակադեմիկոս Արտ. Կարինյանի «Ակնարկներ հայ պարբերական մամուլի պատմության» առաջին հատորի հիմնական և ծավալուն գլուխներից մեկը նվիրված է Մ. Թադիադյանի հրապարակախոսությանը, նրա ժողովրդաստանական գործունեությանը։ Պրոֆեսոր Մ. Մանթրոսյանի «Թադիադյանը մանկավարժ» գրքույկը պարզաբանում է Մ. Թադիադյանի մանկավարժական բեղմնավոր գործունեությունը և նրա հայացքները։

Միաժամանակ պետք է նկատել, որ որոշ արխիվային փաստաթղթերի հիման վրա պարզվում է, որ բազմաշխատ գրող և գիտնական Մ. Թադիադյանը

յանը թողել է անտիպ և տակավին անհայտ հարուստ զրական ժառանգություն, որի հայտնաբերումը և հրապարակումը զգալիորեն կհարստացնի նրա կյանքի ու գործունեության մասին մեր ունեցած պատկերացումը և նոր արժեքավոր նյութեր կտա 19-րդ դարի առաջին կեսի հայ կյանքի և մշակույթի ուսումնասիրման համար:

Մեր նպատակը չէ թվարկել, առավել ևս կանգ առնել Թաղիադյանի տպագրված և մեր բանասիրությանը հայտնի գործերի վրա, այլ ցանկանում ենք Մ. Թաղիադյանի հայտնած տվյալների և արխիվային որոշ փաստաթղթերի հիման վրա ճշտել, թե որոնք են նրա անտիպ և մեզ տակավին անհայտ ստեղծագործությունները:

Խոսքը նախ և առաջ վերաբերում է Թաղիադյանի գիտական ուսումնասիրություններին: Հայտնի է, որ նա 1830 թ. տպագրել է իր առաջին լուրջ գիտական աշխատանքը՝ «Դիցաբանություն»-ը, ուր գիտականորեն քննում է հայ ժողովրդի առասպելական հերոսների վարքը: Բայց դա Թաղիադյանի միակ ուսումնասիրությունը չէ:

1840 թ. Կալկաթայի անգլիական եպիսկոպոսական ճեմարանի տպարանում լույս տեսած, «Մեսրոպյան այբբենարան» գրքի վերջում Մ. Թաղիադյանը տալիս է իր այն աշխատությունների ցանկը, որոնք պատրաստ են տպագրության, բայց նյութական միջոցներ չլինելու պատճառով հնարավորություն չունի հրատարակելու: Դրանք են. «Ընթերցարան» իբրև երկրորդ հատոր դորա (նկատի ունի Մեսրոպյան այբբենարանը—Ջ. Մ.), «Բանալի հայկաբանություն» յորում դնին անգլիական նախադասություն և կանոնք զկնի՝ յեղուց գնոսա ի վճիտ հայկարանություն, «Շարժաբանություն» որ զգորություն աշաց և լուսաւոր գունաւորացն բացատրէ, «Աստղաբանություն» որ զմոլորակաց զվարճանայ և զանմուլար աստեղաց ճառէ»¹:

Այս հիշատակության մեջ նշված աշխատությունների մասին բացի վերջինից, մենք այլ վկայություններ չունենք: Ինչ վերաբերում է «Աստղաբանություն» գրքին, ապա պարզվում է, որ դեռ Կ. Պոլսում եղած ժամանակ Մ. Թաղիադյանը «Աստղաբանություն» գիրքը ներկայացրել է բողոքական միսիոներների Մոսկերտյան կոլեջի տպարանում տպագրելու, բայց Կ. Պոլսից հեղինակի արտաքսումը պատճառ է դարձել այդ գործի խափանմանը: Դա երևում է Դրականության և արվեստի թանգարանում Թ. Աղատյանի ֆոնդում պահվող Մ. Սեթյանի նամակից՝ ուղղված Մկրյանին: Խոսելով Մ. Թաղիադյանի բնավորության և ստեղծագործության մասին, Սեթյանը միաժամանակ մեջ է բերում նրա նամակը՝ գրված Կ. Պոլսում 1839 թ. ապրիլի 11-ին: Այդ նամակում Թաղիադյանը գրում է. «...նոր մի գիրք էլ շինեցի աստղաբանության վերա և հիմա կր տպվի, աստուծով 4 կամ 5 ամսեն ետ դուրս կուգա և քեզ կուղարկեմ քանի հատ»²: Իսկ շուրջ մեկ ամիս հետո Թաղիադյանը Տրապիզոնից գրում է Անդրեաս Ուուպելյանին. «Աստղաբանությունը սկսավ տպագրիլ»³: Սրանով ավարտվում ևս մեզ հայտնի տեղեկություններն այդ աշխատության մասին: Պետք է ենթադրել, որ գիրքը չի տպագրվել:

Վերահիշյալներով չեն սահմանափակվում Թաղիադյանի անտիպ աշխատությունների ցանկը 1852 թ. «Ազգասեր Արարատյանի» տպարանում լույս

1 Մ. Թաղիադյան, Մեսրոպյան այբբենարան, Կալկաթա, 1840:

2 Գրականության և արվեստի թանգարան, Թ. Աղատյանի ֆոնդ, վավերագիր № 10090:

տեսած Գևորգ Զաքարյանի «Ջավա կամ րնդհանուր ծանոթություն բազմակզզի ծովու արևելյան Հնդկաց» գրքի վերջում Թաղիադյանը հայտնում է, որ տպագրվող վերոհիշյալ գրքից ստացվող եկամուտը պետք է հատկացնի «Ճանապարհորդություն ի Հայս» և «Պատմություն հին Հնդկաստանի» աշխատությունների թերի մնացած մասերի ավարտմանը և տպագրությանը³։

«Ճանապարհորդություն» մնացորդ մաս ասելով, նա, հավանաբար, նկատի ունի «Ճանապարհորդություն ի Հայս»-ի օրգանական շարունակությունը հանդիսացող «Ճանապարհորդություն ի Պարս» աշխատությունը, որի մի քանի մամուլն էր հրատարակվել և խափանվել էր նյութական միջոցներ չունենալու պատճառով⁴։ Այդ երկի տպագրված մի քանի մամուլը հետագայում Մ. Նալբանդյանը Կալկաթայից բերեց իր հետ, որը նրա անձնական գրադարանից հայտնաբերել է Ռ. Նանումյանը (տե՛ս հեղինակի «Մ. Թաղիադյան» գիրքը)։

Մ. Թաղիադյանը «Ազգասերի» բազմաթիվ համարներում խոսելով իր օրագրերի և այլ ստեղծագործությունների մասին, նշում էր նաև արմատական բառարան կազմելու անհրաժեշտությունը⁵։

Այսպիսով, պարզվում է, որ իրոք, Մ. Թաղիադյանը իր մահից հետո ժառանգություն է թողել, բացի տպագրված գործերից, զգալի թվով անտիպ աշխատություններ։

Ինչ ճակատագիր վիճակվեց Թաղիադյանի արխիվին, մասնավորապես նրա անտիպ աշխատություններին, ո՛վ է ժառանգել այն կամ օգտագործել։

Կալկաթայից հեռանալիս Մ. Թաղիադյանը, ինչպես հայտնի է, տպարանը հանձնեց Հովհ. Խաչիկյանին, իսկ իր անտիպ և տպագրված գործերի մի մասը՝ իր աշխատակից և բարեկամ՝ Թադևոս Ավետումյանին։ Մնացած մասը՝ շուրջ քսան արկղ գիրք ու ձեռագիր աշխատություններ վերցնելով իր հետ, ճանապարհվեց դեպի հայրենիք։ Դրքերով ու ձեռագրերով լեցուն այդ արկղները Մ. Թաղիադյանը հասցրեց Շիրազ, ուր մահամերձ վիճակում գտնվելով, խնդրեց, որ անպայման փոխադրեն նոր Ջուղա և հանձնեն Ամենափրկչյան վանքի Մատենադարանին։ Դրանք Մ. Թաղիադյանի մահից հետո, իրոք, տեղափոխվեցին նոր Ջուղա։ Այդ պարզվում է և՛ Թադևոս Ավետումյանի և Մ. Նալբանդյանի հայտարարություններից⁶ և այլ աղբյուրներից։ Այդ մասին է վկայում նաև Մ. Սեթյանը՝ Հովհ. Մկրչյանին ուղղած մի նամակում, երբ հաղորդում է, որ իր հայրը նոր Ջուղայի վանքում ականատես է եղել այդ նյութերի ստացմանը։

Մեզ ոչինչ հայտնի չէ նոր Ջուղայի Ամենափրկչյան վանքի ստացած այդ նյութերի մասին, բայց, հավանաբար, դրանք պահվում են վանքի մատենադարանում։

Ինչ վերաբերում է այն նյութերին, որոնք Թաղիադյանը թողեց Կալկաթայում իր բարեկամների մոտ, ապա մենք հետևյալը գիտենք։

1886 թ. Հովհ. Մկրչյանը հրատարակելով Մ. Թաղիադյանի կենսագրությունը, միաժամանակ հայտարարեց և խնդրեց նոր Ջուղայի և Կալկաթայի հայերին, որ եթե Թաղիադյանի գրական ժառանգությունից պատահականորեն գտնեն, ապա հրապարակեն կամ հաղորդեն իրեն։

³ Գ. Զաքարյան, Ջավա կամ րնդհանուր ծանոթություն բազմակզզի ծովու արևելյան Հնդկաց, Կալկաթա, 1852։

⁴ «Ազգասեր», 1846, № 38։

⁵ Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, 1940, հ. 1, էջ 268։

Այս կոչին նոր Զուղայից և Կալկաթայից արձագանքեցին Մ. Թաղիադյանի կնոջ հարազատները՝ Հովհ. Սարգսյանը և Մ. Սեթյանը։ նրանք եռանդուն կերպով զբաղվեցին Մ. Թաղիադյանի գրական անտիպ նյութերի որոնման խնդրով։ Այդ մասին են ասում նրանց այն նամակները, որոնք պահպանվում են Հայկական ՍՍՌ ԳԱ Գրականության և արվեստի թանգարանում⁶։

1890-ական թվականների սկզբին գրած իրենց նամակներում Հովհ. Սարգսյանը և Մ. Սեթյանը տեղեկացնում էին Հովհ. Մկրյանին, որ իրենք հաշիկ Լիվետումյանի մոտից ձեռք են բերել Մ. Թաղիադյանի անտիպ ստեղծագործությունների և օրագրերի մի քանի տետրեր։ Մ. Սեթյանը հայտնում է, որ ինքը մտադիր է ընդօրինակել այդ նյութերը և ուղարկել Հովհ. Մկրյանին, որ նա հրատարակի դրանք։ Մ. Սեթյանը կատարելով իր խոստումը, ընդօրինակեց Մ. Թաղիադյանի նորահայտ ձեռագիր նյութերը և ուղարկեց Հովհ. Մկրյանին՝ իր մոտ պահելով բնագրերը։

Ինչ նյութեր էին դրանք։ Այս հարցին պատասխանում է Հովհ. Սարգսյանի 1888 թ. դեկտեմբերի 29-ին Բաթավիայից գրած հետևյալ նամակը։

«Ընկալալ ի բարեկամս ի Կալկաթա ղհետագա ցուցակ քանի մանր հեղինակութեանց բազմաշխատ Մեսրոպբայ հանգուցելոյ, որք կան ի Կալկաթա։

1. Բառարան Ա—մինչև Օ, ինքն կասէր մին հազար բառեր են, լի մեկնութեամբ և հաստատութեամբ, իւր ձեռագիր։

2. «Թութակ Թաղիադեանց» ձեռագիր։

3. Մանոթութիւնք վասն օրագրութեանց և հնութեանց գտելոց։

4. «Ճանապարհորդութիւն ի Պարս» Ատրպատական, թիվ 5։

5. Պատասխանի տետրակին, որ 1831-ամի ել ի տպարանէն Անգղիականաց. ինքն հիշէ այսպէս։

«Հրեշտակ աղգեցութեան առ հայս հոովմեացեալս առարէ Մ. Գ. Թաղիադեանց 1831 թ. նուիրլ առ պարոն Յարութիւն Լեզարեան»։

6. «Ճանապարհորդութիւն ի Հայաստան» երեք տետրակ և մի ևս կարճագոյտ մասն տպված։

7. «Առակք» հատոր Բ։

8. Մի տետրակ իւր ձեռագիր բանաստեղծութիւնր։

9. «Գինի ջերմեռանդ» թարգմ. 1842 թ.։

10. «Օրագրութիւնք 1830—1842 թվերի»⁷։

Հովհ. Սարգսյանի հետագա նամակներից պարզվում է, որ Մ. Սեթյանը բացի վերոհիշյալներից արտադրել և Կ. Պոլիս է ուղարկել Թաղիադյանի նաև հետևյալ գործերը։

1. «Օրագրութիւն Կ. Պոլսից Բաղդադ»։

2. «Ճանապարհորդութիւն Թավրիզից Շիշվան»։

3. «Ստուգաբանական բառարան» (թերևս սա հենց նույն արմատական բառարանն է, որի մասին հիշատակվեց—Ջ. Մ.)։

4. «Ճանապարհորդութիւն ի Հնդկս»։

5. «Բառարան գեղջուկ բառից»։

⁶ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավերացիր № 10092։

⁷ ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, վավերացիր № 10093։

6. «Եղերերգություն յօրհաս Թանկա Թաղիադեանց»⁸:

Հետագա նամակագրություններից և փաստաթղթերից պարզվում է, որ Հովհ. Մկրյանը ստացել է այդ բոլոր նյութերը Դրանց մի մասը՝ «Եղերերգություն յօրհաս Թանկա Թաղիադեանց»-ը առանձին գրքով նա հրատարակեց 1893 թ. Թիֆլիսում:

Հովհ. Մկրյանը հենվելով Մ. Թաղիադյանի օրագրերի վրա, գրեց նրա ընդարձակ նոր կենսագրությունը, որը նպատակ ուներ մի շարք այլ անտիպ նյութերի հետ հրապարակել: Բայց վրա հասած (1896 թ.) ծանր դեպքերը, սուլթանական Թուրքիայի դաժան ճնշումն ու հալածանքը, և Մկույանի ծերությունն ու մահը (1909), թույլ չտվեցին հրապարակ հանելու այդ նյութերը:

1934 թ. Հովհ. Մկրյանի հարուստ արխիվը, որը պարունակում էր մի շարք ձեռագրեր, հնատիպ և արժեքավոր գրականություն և այլն, այդ թվում, հավանաբար, նաև Մ. Թաղիադյանի այն գրական նյութերը, որոնք արտագրել և նրան էր ուղարկել Մ. Սեթյանը, Կ. Պոլսից տեղափոխվել է Անթիլիաս, ուր և պահվում են մինչև այսօր: «Երկու տարի առաջ, — կարդում ենք այդ մասին, — ողբացյալ Բաբգեն կաթողիկոս փափաքելով ճոխացնել Անթիլիասի գրադարանը, նյութական մեծ զոհողությամբ մը գնած և Անթիլիաս փոխադրած էր բարեհիշատակ Հովհ. ա. քհ. Մկրյանի ձեռագիր և տպագիր հարյուրավոր հատորները: Ես ամիսներ առաջ առիթ ունեցա քննելու Մկրյանի ձեռագիրները. ուր դտա հազիվ թե ութը հատոր, նկարագրելու արժանի: Մնացյալները 19-րդ դարու հասուկ ընդօրինակություններ են»⁹:

Այդ նյութերի մեջ են Մ. Թաղիադյանի 1830—42 թթ. օրագրերը, որոնք վերաբերում են գրողի կյանքի տակավին մեզ անհայտ ժամանակաշրջանին: Դրանք անշուշտ կպատասխանեն մեր բանասիրության անհայտ այն հարցերին, թե Մ. Թաղիադյանը 30-ական թվերի սկզբին ի՞նչ գործունեություն է ծավալել էջմիածնում, ի՞նչ նպատակով է գնացել Կ. Պոլիս, ինչու է հալածվեց ու ձերբակալվեց և այլն: Բացի այդ, Թաղիադյանի օրագրերը, ինչպես այդ երևում է նրա վաղ շրջանի օրագրությունից, շատ կարևոր նյութեր են պարունակում ժամանակի հասարակական, տնտեսական-քաղաքական և կուլտուրական կյանքի մասին:

Մյուս ձեռագիր գործը Թաղիադյանի կազմած արմատական բառարանն է, որը մեծ հետաքրքրություն կարող է ներկայացնել մեր լեզվաբանների համար: Թաղիադյանի անտիպ, բայց մեզ հասած աշխատությունների թվումն են նաև «Պատմություն Հնդկաց»-ի երկրորդ հատորը, «Ճանապարհորդություն ի Պարսի» շարունակությունը, «Ճանապարհորդություն ի հնդկս», «Զվարճախոս առակքի» երկրորդ հատորը, «Բառարան գեղջուկ բառիցը» և վերը հիշատակված մի շարք բանաստեղծություններ, թարգմանություններ և այլն:

Ինչ վերաբերում է Թաղիադյանի անտիպ նյութերի բնագրերին, ապա դրանք մնացին Կալկաթայում Մ. Սեթյանի մոտ: Բայց նա զբաղված լինելով իր առևտրական գործերով չի կարողացել հրապարակել դրանք, թեև 1926 թ. Վենետիկում հրատարակած իր «Գրիչ ոսկեգրիչ մատենագրին Մեսրոպրա Դավթեան Թաղիադեանց» գրքում մասնավորապես մատնանշում էր, որ ինքը կզբաղվի

⁸ ԳԱԹ, Թ. Աղատյանի ֆոնդ, վավերագիր № 11020:

⁹ Ա. ր. ա. արքեպիսկոպոս Սյունիսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց Հայկպի և Անթիլիասի, 1936 (ընդգծումը մերն է—Չ. Մ.):

Թաղիադյանի անտիպ երկերի տպագրության գործով: «Բարեբախտաբար տակաին գտանին աստ առ իս նախագաղափարք ձեռագրացն և նշխարացն գրական անտիպ երկոցն քերթողին, զորս ունիմ ընծայել է լոյս, եթէ կամք իցեն երկնից և ինձ ևս կեանք»*: 1940 թ. Մ. Սեթյանը վախճանվեց անկատար թողնելով տասնյակ տարիներ առաջ իր տված խոստումը:

Ինչպես տեսնում ենք, բազմակողմանի է եղել Մ. Թաղիադյանի ստեղծագործական միտքը: Նա թողել է գրական, հրապարակախոսական հարուստ ժառանգություն, որը բարեբախտաբար փրկվել է ժամանակի կորստից:

Վերոհիշյալ ստեղծագործությունների հայտնաբերումն ու հրապարակումը, անշուշտ, հնարավորություն կտա ավելի խորն ուսումնասիրելու և ըստ արժանվույն գնահատելու 19-րդ դարի առաջին կեսի հայ վերածնության ռահվիրաներից մեկի՝ Մ. Թաղիադյանի կյանքն ու գրական-հրապարակախոսական և մանկավարժական գործունեությունը, ինչպես նաև ի հայտ կբերվեն 19-րդ դարի առաջին կեսի կուլտուրական, տնտեսական-քաղաքական կյանքի առանձին դրվագներ, որոնք տակավին անհայտ են:

Մ. Սեթյան, Գրիշ ոսկեգրիշ Մ. Դ. Թաղիադյանց, Վենետիկ, 1926, էջ 20: